

Առաջ որ անոնք Հայուն կը կանչէին Արմէն, և իրենց իշխանաւորին Շահ-Արմէն. այս ներկայ պարագաներուն՝ հայը ոչ թէ Արմէն, այլ «Ֆրլա» անգամ կոչուելու արժանի չէր, միայն կը նկատուէր ոչնչութիւն մը՝ որին սրբելու, ասպարիզէն վերցնելու համար Գիւրդ հասարակութեան միայն հրամայել էր պէտք:

Գիւրդերը իրենց զօրութիւնն ու հարստութիւնը կը գրտնէին հայերէն խելու, ի հաշիւ հայերի ընդարձակուելու ու անպատասխանատու մնալու մէջ. յենով թիւրք ժամանակակից կառավարութեան քաջալերութեանը:

Հայերը իրենց զարգացումն կ'որոնէին Քրդական ասպատակութիւններուն վերջ տալուն մէջ, բողոքելով Քրդական ասպատակութիւնների դէմ:

Մի խօսքով Հայը կը դիմէր ու կսպասէր բարեկարգութեան (réforme). Գիւրդը առանց սպասելու կը դիմէր միշտ անկախութեան:

